ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-ը մայիսի 2015թ. թիվ 81-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 165-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ,,Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին'' թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015թ. մարտի 13-ի թիվ 548 հրամանով հաստատված հավելվածը

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների պաշտոնական դրույքաչափերը՝ համաձայն կից հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 165-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2015թ., մայիսի 15
Ք. Իջևան